

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien
ARCHALOUYOS

(EGYPTE) LE CAIRE

Չի հրատարակուած ձեռագիրները
եւ չե՛ն սրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է. իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր համաձայնութեամբ :

Պարտ - Ներ - Խմբագրութեան
ՓԱՊԵՏԷ ՓՈՐՈՒՄԵՆԻ



ԱՐՁԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Ք

ՊԱՏՄԱՆՔ

ՆԻՒՊՏՈՍ
Տարեկան դրոշմը 30

ԱՐՏԱՍԱՄԱՆ
Տարեկան փրակը 10

Բաժանորդի 3ԱԵԼՈՒՄ ԳՆԵՐՈՒ ՓՈՒՍԱՐԷԳ
ՎԵՐՈՒՄԷՎ ԳՆԵՐՈՒ ՎԻՍԻՐԷՄԱՆ :

—*—

Թի՛ ԱՐՇԱԼՈՍՈՒԻ եւ թի՛ ՏՊԱՐԱՆԻՆ
Վերաբերեալ ներքինի խնդրոց հարաւ
պիտի է զիտել ներքինիքի հասցեով
քերթիս Մասնաւարտին, որ է՛

ՊԱՐԻՔ ՓՈՒՄԵՆԻ

—ՅԷ ՀԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ՕՐԵՐԸ —

—ՅԸ Յօդուածագիրները ուղղակի պատասխանա-
տու են իրենց գրածներու —

—ՅԹ ՅԱՏԸ 20 ՓԱՄԱ ՈՂՁ —

ԻՆՆՆ ԿԵՍԷ ԱՆՃԱՏ ՄԸ

Ինքնագիտակցութեան զգացու-
մը կը թելադրէ՝ այլեւ բողոքի ար-
դար ճիշդ բարձրացնելով հարցնե-
լու Ազգային Դործիչ գաղափարա-
կան դասակարգին թէ՛ ի՞նչ օգուտ
և նշանակութիւն ունեցան ցարդ ի
գործ դրուած ու գրուելիք անըն-
պատակ և ամուլ միջոցներն ու ծան-
րակշիռ նիւթական, բարոյական զու-
հողութիւնները, որոնք փոխանակ
Անգլի պէս պէս ցաւերն մասամբ մեղ-
մացնելու և դարմանելու, աւելի
բարեբեկ տուին զանոնք :

Ազգային ներկայացուցիչ(?) դա-
սակարգի և գործող մարմնոյ ո՞ր
նշանակելի ընթացքը կամ տիրար
գործելակերպը յոյս և վստահու-
թիւնն պիտի ներշնչէ տառապող
զիւղացիին՝ (զիւղացիներէ ի զատ
մարդ չըկայ Հայաստան) յետ այ-
սու ևս համբերելով յուսալու... :

Ճարը հատու գիւղացիին, կա-
րելի չէ այլ ևս խաբել զայն ուռու-
ցիկ և թուրցիկ գործելակերպներով,
որոնք մինչև այժմ իր սև ճակա-
տագրի հետ խաղալու ընդթն ու-
նեցան :

Աննպաստ ու թոյլ գործողու-
թիւններու ծնունդ տուող տպաւոր-
ութիւններու ներշնչումով՝ ներ-
քին տրամադրութիւններու և յա-
ռաշխմութեան ներքին միջոցներու
պատրաստութեան նպատակալարմար
ախտը անտես առնուելու արդիւն-
քը... վայելցնելը և յոյս կայ որ
պիտի վայելնք տակաւին լիառաս :

Ինչքին չէ՞ միթէ գուշակիլ որ
խեղճուկ և անկարեւոր խնդիրներու
քաջքոյմով և անկարեւոր ձեռնարկ-
ներու յարումով՝ անոնցմով յու-
սալու դանդաղումով Ազգը անդի-
տացաւ զինքը կենդանացող պա-
րագաները նկատողութեան առնել,
և այդ անգիտակից ու կոյր հետեու-
թեանց դեղևումներու մէջ, ներ-
քին տրամադրութեանց և ներքին
ոյժերու բացակայութիւնը աղետալի
հանգամանքներ ստացան, ըստ ո-
րում գաղափարաց և զգացումներու
խօշ տրամադրութիւններու տակ
չափազանց յոյս տրուեցաւ վտան-
գաւոր ու կործանարար յառաջխա-
ղացումի մը վրայ և ըստ բաւակա-

նին հաւատ չընծայուեցաւ ազգային
ինքնօգնութեան, ինքնազարգաց-
ման և համերայնութեան ոգւոյն ու
ձգտումներուն :

Ի՞նչ կը փնտռենք օտարաբոյր
վայրերու մէջ, պէտք ունինք մեր
գործունէութիւնը օտարներուն ցոյց
տալու, որի՞ համար են՝ սարքուած
ազգայնական հանգէսները, ատե-
նաբանութիւնները, խրատուական
ճառախօսութիւնները : Ո՞վ ենք
մենք, և ո՞վքեր են ցարդ մեզմով
հետաքրքրուողները, ինչ է մեր
ուզածը, և որմէ՞, ազատ հողին
վրայ ընդգրկուած լայն ասպարէզին
մէջ աննպասակ եւ ձիւղացիի բրո-
վրոսումնիս, որի անուան տակ հա-
զար և մէկ սերունդ գործուեցան և
չահագիտական նկատումներ յանչափս
յագուրդ ստացան, չը չափաւորե՞նք
քիչ մը :

Անգրագառնալով մեր սխալ
քայլերուն, սեղմնք մեր և հայ-
րենիքի մէջ բացուած լայնափեռեկ
անդունդի շրջանակը, այն ատեն
լուրաքանչիւր ազգային իր կարողու-
թեան ներած չափովը մշակած ազ-
գասիրութեան զգացումներու մը-
ղումովը՝ առանց երբէք ուռուցիկ
խրատուական յորդորներու, կրնայ
ի հարկին անդին անցնելով փարիլ
իր նուիրական պարտականութիւն-
ներուն :

Պատրաստենք մեր նոր սերուն-
դը՝ ժամանակի պիտոյից համեմատ,
առաջադրենք ինամեալ կրթու-
թիւն մը իւրացնելու պայմանները,
որոնք մեր սնտեսական պայման-
ներու զօրացման և ազգային վիճակի
բարոքման գլխաւոր կարագետներ
ըն պիտի ըլլան Վիճակը մեր, որ,
այն համայնքը որ ջանայ կարելի ե-
ղածին չափ իւրացնել կրթութեան
գոնէ անհրաժեշտ մասերը՝ աւելի
մեծ ընդունակութիւն ցոյց տուած
պիտի ըլլայ արդիւնաւոր կերպով
աշխատելով սերտիւ յարելու Ազ-
գային բարեկեցութեան պայմաննե-
րուն :

Ի՞նչ պիտի ըլլան հայրենեաց
այն վայրերը՝ ուր ազգային լեզուի
գործածութեան բոլորովին անհե-
տացումովը և եկեղեցեաց՝ տարի-
ներու շարքին տակ տիրող անտե-
սական տագնապներու բերումով

հիմնովին քայքայուելով, տեղացի
ազգայինները տիրող քայքայիչ ճըն-
շումներու ազդեցութիւններէն սար-
սափահար հետզհետէ հեթանոս և օ-
տար յարանուանական տարրերու
հետ ձուլուելու վրայ են : Կրթու-
թիւնը հրաշքիք մը չպիտի՞ գործէր
նոյն տեղերը, ազգին օգտակար և կիրթ
քաղաքացիներ պատրաստելով թըլ-
ուաւ և սպէս ամբախի մը մեջէն :

Ազգին զարգացմանը նպաստա-
ւորող նմանօրինակ ձեռնարկներ նոր
ոյժ մը չպիտի կազմեն, բարոյապէս
մտաւորապէս և սնտեսապէս զօրա-
ցընելով ազգի տկարագոյն կողմերը :

Եւ որպէսզի կարողանանք պահ-
պանել մեր գոյութիւնը և օր մըն ալ
յաջողիք ամենայն իրաւամբ պաշտ-
պան հանդիսանալով մեր արեան կա-
թիլներուն ու անոնց գնոյն՝ պարզել
ինքնավարութեան դրօշ մը, ջանա-
լու ենք տարածել հայ ընկերութե-
ան ամեն խաւերուն մէջ ժամանա-
կի յառաջգիւմութեան տարրերը և
ինքնօգնութեան ու համերայնու-
թեան զգացմանց մշակման յարմա-
րադոյն միջոցները :

Ինքնօգնութիւնը պիտի պար-
տաւորեցնէ զմեզ մեր յոյսերը կեղ-
րոնացնելու ըստ արժանեոյն մեր զար-
գացման և յառաջգիւմութեան մի-
ջոցներուն վրայ : Սոյն սկզբունքով
ներքնապէս պիտի ջանանք իւրացը-
նելու նշանակելի ինքնազարգացում
մը և մեր իւրաքանչիւր համախմբու-
թիւնները - ժառանգոր դաւառներ
և գիւղեր - պիտի աշխատին իրենց
սեփական միջոցներով իրենց զար-
գացման պայմաններուն փարելու :

Համերայնութեան զգացումն ալ
պիտի թելադրէ զմեզ Ազգի տկարա-
րագոյն և անձեռնհաս դասակարգե-
րու յառաջգիւմութեան միջոցներուն
նպաստելու ընկերակերպար և գոր-
ծակցելու : Եթէ ինքնօգնութիւնը
գոյնիլ ինքնասիրութիւն և անձնա-
սիրութեան զգացում մը կը տրա-
մադրէ՝ համերայնութիւնն ալ ոչ
նուազ լուրջ ընկերակցութեան մը
գործնական անկեղծ արտայայտու-
թիւնը կրնայ համարուիլ :

Սոյն կրկին սկզբունքները կը
կազմեն դրական և իմացական մար-
դու բնաւորութեան և նկարագրի ամ-
բողջութիւնը և կատարեալ ու նա-
խանձելի կազմակերպութեամբ պար-

ծող ժողովրդաց մէջ ևս նոյն երկու
զգացումները համընթաց գործած են
միշտ : Հակառակ ի դէպս՝ Ազգու-
թիւնը թերակատար է և հզօրի ճի-
րանին մէջ միշտ խաղալիք... :

ԱՊ - ԻՒԼ - ԹՅՏԱԻԼ

ՄԵՐ ԵՈՒԿՁԸ

Արշալոյս ի - 22 րդ թիւին մէջ
Պ. Ս. Օ. ազգայնէն ոգիով առըցուն
բաց նամակ մը ուղղած էր Գ. Թ. Գ. Թ.
յունեանի հասցէին, որուն պարու-
նակութենէն կը տեղեկանամ՝ որ
ինչպէս Աղէքսանդրիոյ, նոյնպէս և՛
Կահիրէի հայրիսու և գիտակից կարգ-
մը Հայ - Կաթոլիկ անձնաւորու-
թիւններ, արդի պահանջմանց հա-
մաձայն կազմակերպուած ազգային
երկեսու վարժարաններ, Ազգային -
Ժողովներ, Աղքատախնամ - Բարե-
գործական հաստատութիւններ ու
նենալ կը փոփոքին, այն հաստատ
գիտակցութեամբ որ այս ամէնը՝
ազգի մը ինքնապահպանման անհր-
րաժեշտ միջոցներն են : - Ե՛ս ալ,
կ'ուզեմ այս առթիւ, իմ համեստ
զիտողութիւններս ու դաղափարնե-
րու պարզել հրապարակաւ, քանի
որ իբրև մէկ անհատը այդ միւսնոյն
Հայ - Կաթոլիկ հասարակութեան,
խիտ նախանձախնդիր եմ ամէն
գործի նկատմամբ՝ որ զուրկ կրօնա-
կան և հաւատական հանգամանքէ,
լակ ազգային և մարդասիրական
ձգտումներու շուրջը կը դառնայ :

Ի՞նչ աշակցութիւն և ի՞նչ խրա-
խոյս ստանալ կը յուսանք Գ. Թ. Գ. Թ.
յունեանէն, քանի որ մեր կողմէյցի
եպիսկոպոսը դեռ եզրիպոստ չ'հա-
սած, պապաշունչ հովուական թուղ-
թով մը որոշապէս յայտնած ու ցու-
ցադրած է իր գաղափարները և հե-
տեկէք ծրագիրները այս կարգի
խնդիրներու մէջ, հովուական մը
սրուն սկիզբէն մինչև վերջը ամէն
մէկ տողը՝ վատիկանեանի մը աղ-
գակործան կծու հօտը կը բուրբէ,
անգամ մըն ալ յիշեցնել տալով մե-
ղի, թէ. - ո՞վ անժամանակութիւն,
տակաւին մեր մէջ կը գտնուին ե-
լեր Հասունեանի սև գաղափարնե-
րուն հետեող և զանոնք պարեցնող
եպիսկոպոսներ, Պ. Ս. Օ. այդ թուղ-

թեմա, ինչպէս այդ եղել է Գահիրէ-ում » :

Գահիրէի բոսնացի վերջնական ետքը Պ. Ն. Հանգոյց նամակաւ մը կը յանձնարարէ Աղէքսանդրիոյ Ենթակոմիտէի անդամներէն մէկուն Գ. Ն. ինչ որ պէտք է Պուլկարիան նաւու միջոցաւ Պուլկարիա զրկեն Գոնիտրանէն Գ. Ն. իր ընկերներուն ցոյց տալով նամակը կը խորհրդակցին եւ նամակ մը գրելով Պ. Ն. Հանգոյցին կրօնէն որ փոխանակ Պուլկարիա երթալու թող զայ հոս եւ բոսնացի մ' ալ հոս թող սարքէ, եւ կը խոստանան ամէն աշակցութիւն ընել :

Քոնստանտինոպոլիսի Գոնիտրանէն զայ : Ենթակոմիտէի անդամներէն երկուքը ժողովի մը մէջ կը հակառակին ո եւ է պաշտօնական գոյն տալու դէմ, եւ չեն ալ ընդունիր որ Ենթակոմիտէի անունով ձեռնարկուի : Ենթակոմիտէի անունով երկուքը Քոնստանտինոպոլիսի ի նպաստ բոսնացի տրուի, եւ ասոր վրայ Ենթակոմիտէի անդամները իրենց հետ անունով քանի մը դաշնակցակցներ, անմիջապէս կը ձեռնարկեն տղաքներ եւ աղջիկներ հաւաքելու գործին՝ քննաճարի առաջարկութիւններով : Նոյն իսկ Ենթակոմիտէի անդամներէն պարագըլուիս - երկուքը անձամբ գիտած են այս կամ այն ընտանիքներուն որպէսզի իրենց աղջիկները տարածարեն : Գործը ինչն է որ պէտք է կատարուի, լմնայ, « քառաձայն երգել ալ կը սորվին » (միտիսները ինչպէս պիտի ե որսայ) ու « Համբար » ը ներկայացուցեալ :

Տարբեր խնդիր է թէ « փաս եւն ըրեր » եւ կամ չհանր, բուն խնդիրը հոս է որ 60 - 70 հոգի, « սիրողներ » ու անունին աակ, աշխատողներ են եւ բեմ քաջեր՝ Ենթակոմիտէի անդամներուն եւ համախոհներուն ջանքով՝ մէկ հոգիի մը հաշույն համար. կարծես թէ Լ. Պողոսեանի մը հաշույն համար իրար անցնելը, օրերով, շաբաթներով աշխատելը՝ յեղափոխական մեծ գործ մը տեսնել ըսել է :

Ենթակոմիտէի անդամները՝ տեսնելով որ Քոնստանտինոպոլիսի մը չհանր հակառակ այնքան ջանքերուն, կորոչեն որ այս անգամ ալ ի նպաստ կարմիր ինչի քաղաքական բանտարկեալներուն բոսնացի մը տան եւ շփոթ կէտը ինքն անէ կէտն ալ՝ Գարմիր Սաչին եւ այսպէսով փաստին տեղն ալ լեցնուած կ'ըլլայ :

Շատ լաւ, կըսէ, մեր Քոնստանտինոպոլիսի կործան թէ քաղաքական բանտարկեալներու կէս մարմնացումը եղած ըլլար, միայն թէ պայմանաւ որ մանչ եւ աղջիկ հաւաքելու գործը դարձեալ Ենթակոմիտէին իր վրայ պէտք է առնէ եւ երկրորդ, ներկայացուցէն 5 օր վերջ պէտք է ստանայ իր բաժինը :

Ենթակոմիտէի անդամները կը հաւանին եւ հետեւեալ օր « Արեւ » օրաթերթին մէջ կը տեսնուի Լ. Պողոսեան ստորագրութիւնով աղջ մը, որով կրկին կը հրաւիրէր « իր () » երկուսը երկուսի խումբ » ը քաղաքական բանտարկեալներու ի նպաստ բոսնացի մը տալու համար :

Ճիշտ այս միջոցներուն « Արշալոյս » ի մէջ երբ անակնկալ կերպով « Շահագործում » ի խնդիրը երկուսը կուգայ, ամէնքն ալ շոգեկալով պէս իրար կ'անցնին, փախուտի ճամբայ կը փնտռեն, ու վերապէս, « Սէմիթիս » սրճարանային բարտականութիւնով հիանալի գիւտ մը կ'ընեն, նախ երգողներէն ստորագրութիւն հաւաքել, իրք թէ իրենք յօտարակամ աջակցած են, առանց Ենթակոմիտէի անդամներուն առաջարկութեամբ եւ Լ. Պողոսեանի հայտնաբերումն հետ միասին « Արշալոյս » ինչ զրկելու որ չէր հրատարակուած : Լ. Պողոսեանով՝ քննադատողը անպատուելու եւ հասարակութիւնը խաբելու, իսկ ստորագրութիւններով փաստարանելու թէ « Ենթակոմիտէն

բնաւ մասնակցութիւն չէ ունեցած » 60 ի չափ երգողներ բնական է որ մութի մէջ այս դարձումներու մասին տեղեկութիւն չէին կրնար ունենալ. եւ հիւս մարդմեքներաներու պէս ստորագրած են իրենց ներկայացուած թուղթը « հոս ստորագրէ » ի հրամանին, կամ քաղաքավար առաջարկութեան ձեւին աակ, որով, այս կոյր գործիքները, քննադատութեան առարկայ եղող են : Թակոմիտէի անդամներուն յոռի գործերը ամբողջացող յարակից մասերը կը կազմեն արդէն, եւ միեւնոյն ատեն մեր ըսածները հաստատող անտեղեկ վկաններ կը ներկայանան, որոշուած գործի մը յաջողութեան իրբու միամտ աջակիցներ, որոնց հետ չէ մեր գործը :

Դառնանք խնդրոյն : (Մնացեալը յաջորդով) Ա.ՐԱՄ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՐՓԻԱՐԵԱՆ - ԳՈՉԵԱՆ

Տեղական թերթերը կը ծանուցանեն թէ՛ Արփիարեանի ոճորոյն մեղաւորից ամբաստանուած Չարէհ Գօչեանը, որ եղիպտոսէն արտաքուսեցաւ, Իզմիրի թուրք իշխանութեանց կողմէ՛ ձերբակալուելով Պոլիս զրկուած է, Օսմանեան կառավարութեան հետ ունեցած հին հաշիւ մը կարգադրուելու համար :

Ն Ա Մ Ա Կ Գ Ա Հ Ի Բ Է Ե Ն

Յարգելի Խմբագրութիւն « Արշալոյս » լրագրի Աստ

« Արշալոյս » ի մէջ Ձեր հրատարակած արդարացի դիտողութեան առարկայ եղող վանցառութիւնը մասամբ դաքմանելու համար, պիտի խնդրէի որ բարեհաճէիք անկիւն մը շնորհել յետագայ տողերուն, ընդունելով խորին շնորհակալութիւններս :

Յարգանք մնում Գ. Կ. ԹՈՒՐԵԱՆ

Քաղաքի անուանի կողակար արհեստաւոր Տիար Արթուրի Հալաճեան Չատկի առթիւ 46 գոյգ կօշիկ զրկած է վարժարանին աղքատիկ տղայոց տըրուելու համար :

Ազնիւ զգացման արդիւնք եղող այս առատաձեռն նուիրատուութիւնը այլ եւ այլ պատճառներով, որոնց մէջ կարեւոր տեղ մը կը գրաւէ մտացութիւնը, չէ՛ հրատարակուած տեղական թերթերուն մէջ, զժբազդաբար, ինչ որ անհրաժեշտ էր : Այս առթիւ մասնաւոր գնացողութիւն մ'ըրած ըլլալու գիտակցութեամբ կը փութանք ներկայիս զարմանել զայն, եւ միանգամայն կը յայտնենք խորին շնորհակալութիւն Տիար Արթուրի Հալաճեանի որ այսպիսի կարեւոր նուիրատուութիւն մը ըրած է ինքնաբերաբար, նպատակ ունենալով միայն ուրախացնել եւ միթմարել վարժարանին կարօտ ուսանողները, որոնք առանց աջակցութեան այսպիսի բարեխիտ անձնաւորութեանց յաճախ զրկեալ եւ անմիթմար պիտի մնային :

Տնօրինութիւն Գալստեան Ազգային վարժարանի (Ն) Դահիրէ 23 Յունիս 908

(Ն)Մ. Ռ. - Եղիպտոսի մէջ առաջին Հայն է Քալստեան Ազգ. վարժարանի մեծայարգ Տնօրէնը, որ իրեն հասցէին ուղղուած գիտողութիւն մը ազնուաբար եւ առանց վշտանալով զէն ընկու, կ'ընդունի, եւ նոյն իսկ զայն դարձանելու կը փութայ : Ուղղութիւն օրինակ անէ :

Ա.Չ.Գ.Ա.ՅԻՆ ԼՈՐԵՐ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Կիրակի օրը կէս օրէն յետոյ Պուլաքի Ազգ. Գալստեան երկուսը վարժարանի տարեկան մրցանակաբաշխութեան հանդէսը տեղի ունեցաւ խուսն բաղնիքեան մը ներկայութեամբ :

Գալստեան Ազգ. վարժարանը այս տարի երկու սեռէ ութը շրջանաւարտներ կուտայ, որք են :

Օրիորդք Էօժէնի Գնկիլիզեան, Հայկուհի Արապեան եւ Սաթիլի Հապէշեան :

Պարսնայք՝ Վահան Փափաղեան, Յարութիւն Քէօշեան, Գրիգոր Սուվաշեան, Տիգրան Յակոբեան եւ Նուպար Գէորգեան :

ՀՐԱՃԱՐԱԿԱՆ

Ասկէ առաջ զորոյց կը շրջէր թէ Գալստեան Ազգ. վարժարանաց Տնօրէն Տ. Գ. Թուրեան հրատարական մատուցած է :

Ստոյգ ազդիւններէ մեր ստացած տեղեկութեանց համաձայն Հագարաճութիւնը տեղեկանալով որ Տ. Տնօրէնին հրատարակելու ինչ ինչ պատճառներէ առթուած է, մերթեւալ անոր հրատարականը, գրաւոր պահանջած է այդ պատճառաբանութիւններն, որոնք զդրոցին յառաջդիմութեան հետ կապ ունին :

Տ. Տնօրէնը իր առաջարկութեամբ զբաւորապէս ներկայացուցած է Հագարաճութեան, լոր զրկած է Պատ. Քաղաք. Ժողովոյ ի պարտ ու պատշաճ Տնօրինութիւն : Յոյս կայ որ Պատ. Քաղաք. Ժողովը մօտ օրէն հետեւնք մը պիտի տայ ներկայացուած առաջարկներուն, որովհետեւ այս խնդիրը ուրիշներու նման ձգձգուած չ'ըլերցներ . . . :

Վերջին պահուն կը տեղեկանանք թէ՛ Տ. Տնօրէնը իր հրատարականը կրկնելու պէտք զգացած է :

Վիճակը ՍՊԱՆՈՒՅԻՅԻՆ ԵՄԻՍԻՍԻՆ ԵՄԻՍԻՍԻՆ մէջ ինչ հոգի ձերբակալուած են՝ որոց երկուքը կին : Ասոնց նպատակն է եղեր ըստ պանել Խմբագրութիւնը եւ անոր եղբայրը, որոնք Գալստեանութեան դէմ ընդդրուներ եւ բողոք չբարձրէին . . . կ'ըսուի թէ խաբէութեամբ սպաննած են ասոնց հետ եղող 15 տարեկան պատանեակ մը :

Չինոքական ատենի առջեւ հանուելով ամբաստանեալները, 7 հոգիին կարալանի վճիռ արձակուած է, իսկ երկու կիներուն 14 ական տարի տաժանակիր աշխատութեան :

Իրքե մեղաւորներ ձերբակալուած է նաև Արմենակ Սէրվեան անուանով անձը, որուն 13 տարի տաժանակիր աշխատութեան պատիւ սնորհնած են :

Սպին ձախիլի ձեռնարկին անխուսափելի արդիւնքը մեղաւորներու համար դիմումներ եղած են Տնօրինի անդամներուն, սակայն արդիւնքը տակաւին յայտնի չէ : Բայց ի՞նչ կարելի է յուսալ :

ՆԵՌԱԳԻՐ

Լոնտոն 2 Յունիս. - Թէհրանի Անգլո-Ռուսականատուներ շրջապատող զօրքերը եւ քաղաքացան : Անգլիա երաշխաւորութիւն պիտի պահանջէ դիտարանուան ապաստանողներուն համար :

Թէհրան 3 Յունիս. - Ժողովուրդը ցոյց մը կը պարտադրէ Շահին ի պատիւ : Ամէն կողմ խաղաղութիւնը կը վերահաստատուի :

Ս. Բէթէրպուրի 4 Յունիս. - Նախ-

կին Նախարարապետ Ինտիթէֆ զուգոր մնաու :

Ս. Բէթէրպուրի 5 Յունիս. - Ընտանեկան վէճի մը հետեւանօք Կոմս Մանթիօթէլ մենամարտի մէջ սպաննեց Կոմս Սոււմարօթը :

Աթէնք 5 Յունիս. - Սամոսի աւարտութեան ատեն, թուրք զօրքերը Ս. Խարաւամպոս եկեղեցին կողոպտեցին : Գրքերը այրեցին, տաճարը քանդեցին եւ գանձերը յափշտակեցին :

Ս. Բէթէրպուրի 5 Յունիս. - Տնօրին Ապիտինի Ռուսական Դեսպանութիւնը ջնջել քուէարկեց, Գարտուղարը պիտի վարէ Դիւանագիտական գործերը :

Ս. Բէթէրպուրի 6 Յունիս. - Չարք հրովարտակով մը արտօնեց ներքին փոխաւորութեան երրորդ բաժանումը հրապարակ հանելու :

Վիէննա 6 Յունիս. - Երեսփոխաններու խորհրդարանը գործաւորներու ձերութեան օրերը ապահովելու համար հանրավարականներուն ըրած առաջարկը ընդունեց :

ՅԱՒԵՒՈՒԱՄ առաջիկայ թիւով գին մէկ զրո. ողջ ձեռքէ գնողներուն համար :

ՔՆՁԵՐԻ ԸՆԴՈՒՆԱԿ ԵՆ ՄԵՐ Ա.Չ.Գ.Ա.ՅԻՆ ՓՐԿԻՉՆԵՐԸ

ՔՐԱՆԱԿՈՒՄԱՆ ՄԻ ՀՐԵՂԱՅԻՆ ՓՈՐՁ

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

Իրերի այս գրութեան մէջ, Չիթճեանը Ամերիկան թողնելով՝ հասնում է Լոնդոն, ուր սկզբում հաշտեցման քաղաքականութեան է հետեւում. բայց մի քանի օրից յետոյ, Ամերիկայից իրան տրուած իբր թէ « լիազօրութեան » ոյժով՝ ինքն իրան յայտարարում է ղիկատարու եւ պահանջում է Սաղունուց եւ ընկերներէից, յանձնել Կենտրոնը իրան ու քաշել :

Մինչեւ այդ խուլ կոխը՝ այդ օրուանից հրապարակ է գալիս անխնայ ու բացարձակ : Շնորհիւ « վերեւից » իրար յաջորդող շրջաբերականներին, երկու հատուածներին մասաները արդէն մոտ լեզնամ՝ պարտատուում են իրար բղկատելու : Մղում է միմեանց վարկարեկելու համար ամենակեղտոտ, ամենաըստոր աղիտացիան : Յերիւրում են պրչաւոր սուտեր, թխուում հրէշային անեկզոտներ սրա կամ նրա հասցէին եւ որ ստակային է : Տրագրուում են ճիւղաղային սպանութիւններ, Ամենահարազատ ընկերները սխուում են իրարից կտակածել : Մէկ ստեղծով միջավայրը դառնում է սպանական, վայրագ ու ոճիրներով յիբ :

Կենտրոնը չը քիթքո երկու մասի է բաժանուում, որից իւրաքանչիւրը ինքնագրուս անում է ան՝ ինչ որ ցանկանում է :

Չիթճեանը թողնում է Լոնդոնը եւ անցնում է Բուլղարիա, ուր հրահրում է ամենարուսն կերպով հատուածական կոխը : Մինչդեռ Չիթճեանի դէմ սաստիկ շարուում են շնորհ : Պորերը ասելի ու ասելի չեն փարում նրան : Չիթճեան շատ վարպետ կերպով է անոյց մղում իր անգիտացիան՝ նա իրան ցոյց է տալիս ծայրայեղ Միութեանական, իսկ հետինը դուրս է բերում հակամիտութեանական :

Այդ մասնակի Բուլղարիայում էր հին հնչակեանների կրքեմի յայտնի գործիչ Հմայեալ Ռուչպուլեանը, որը պայքարում էր Մազաեւու եւ Կենտրոնի դէմ : Նա նոյն պահուն, ամենաթուրք Միութեանական մարդ էր, նրա համար Ֆրակցիաներ գոյութիւն չուէին, նա ասում էր. « Ոչ հին եւ ոչ նոր, կայ միայն մի եւ միացեալ Հնչակեանցի կուսակցութիւն, որի անդամն եմ եւ, ո՛րքա

զիրքը իր ընկերներին՝ հնարի աչքում
խախտել էր նրանով՝ որ իր ֆրակցիա-
յի հետ չէր գնում եւ քայլ աչք կոխ
էր մղում ընդհանրապէս իր ֆրակցիայի
կենտրոնական վարչութեան 3 անդամ-
ներին, իսկ մասնաւորապէս Սազունու-
ղէն :

Մուշուրեան հաւատարմով Չիթ-
ճեանին, եւ ընդունելով նրան որպէս
իր նման թուրք Միւթեանակուն՝ աջակ-
ցում օգնում էր նրան եւ սոյնքան բա-
ցայայտ, որ հնարը կատարում էին
Մուշուրեանին ղեկով . . .

Սազունին եւ ընկերները մոռց-
նութեան շանթեր են տեղում Չիթճեա-
նի եւ մանաւանդ Մուշուրեանին զլսին
ու յատուկ շրջաբերականով գուճանն,
գաւազիր եւ ուրիշ անպաններով մը-
կըրտում թէ՛ մէկին եւ թէ՛ միւսին :

Այդ բոլոր կտրուները թատերաբեմ
ունէին միմիայն արտասանմանը, եւ
դա հասկանալի էր, քանի որ Ռուսաս-
տանի սահմաններում գոյութիւն չունէր
ոչ մի վերակազմակազմակերպու-
թիւն, Բայց այնուամենայնիւ ողբեր-
գութիւնը ծայր էր տալիս Ռուսաստա-
նում :

Արզունեան - Չիթճեան բոլոր վըճ-
ուում է մուք գործել Ռուսաստան եւ
« լուսաւորել » հնչակեան շարքերը :
Սազունի եւ իւրայինները վճուում են
չի թողնել ոչ որին ուսական հողի
վրայ : Պայքարը չափից դուրս տաքա-
նում է :

Վերակազմակազմակերպ իր յայտնի
ուժերից մէկին՝ Միւթեան՝ Ամերիկայից
ուղարկում է Ռուսաստան, որպէս զի
հնարի շարքերից մարդիկ որսան, որով-
հետեւ չուսով կայանալու էր առաջի-
կայ Ընդհ. Պատգամաւորական ժողովը
եւ երկու կողմերն էլ աշխատում էին
որքան հնարաւոր է շատ կողմակից-
ներ որսալ, մեծամասնութիւն կազմե-
լու համար : Աւերտող է անել, որ մի-
ութիւնը զեռ եւս պաշտօնապէս քան-
գուած չէր :

Միւթեան Սասունի եւ Կիլիկիայի կը-
ռիւնների մէջ մեծ դեր կատարած եւ իր-
րեւ կարծիք զինուոր որոշ հոչակ հանած
մարդ՝ հասնում է Պարիզ ու տեսակցում
իր «նախկին» չէֆի՝ Նազար քէկի հետ
ու խորհուրդ հարցնում, թէ ինչ անել՝
վերջ դնելու համար պատակութեան : Նա-
զարէկը նրան հանդարտեցուցիչ խոր-
հուորներ է տալիս ու ճանապարհ գը-
ցում : Միւթեան գալիս է Փոթի, եւ զո՞
գնում ֆրակցիոններական մոլեռանդու-
թեան . . .

Միւթեան գառնում է Հնչակեան մի-
ութեան առաջին գործ եւ նրա անկու-
մը բողոքականում է հատուածական կրթե-
րն ու գազանային մտածումները : Ա-
լիկոնում է արտասահմանեան հայու-
թիւնը : Վահէն ու իր խմբակը գո՞ էին
որովհետեւ այդ ոճիւրը մի նոր ազդակ
էր առաջ մղելու նկարագրից մինչեւ
Բուլկարիա մինչեւ Ամերիկայ ագիտա-
ցիան ընդդէմ հնարին, ընդդէմ Սազունու-
եւ ընկերներին :

Սազունին սլանում է Կովկաս, ուր
այդ ժամանակ սեղի է ունենում հին
Հնչակեանների պատգամաւոր ժողովը :
Կովկասի Հնչակեանները նոյնպէս վըճ-
ողվելու ակնկոնել էին. նրանք էլ եր-
կու մասի էին բաժանուել - մէկը Սազու-
նիական՝ Արաւստ, Ֆարաւազ, Համր,
Արծի եւ ուրիշներ :

Առաջինները պահանջում էին, որ
հնարի կենտրոնը բոլոր գաւառաների
այսինքն վերակազմակազմակերպ եւ միու-
թեան պահպանման կուսակիցների նը-
կատմամբ գործ զնն խիստ բարեկամներ
վերջնականապէս մարտնչու կուսակցու-
թիւնը : Իսկ վերջինները զմ էին քեպ-
րեսիաներին տերթորոններն ու պահան-
ջուած էին ամեն ինչ յանձնել Լոնդոնում
կայանալիք Ընդհ. Պատգամ. ժողովի
անօրինութեան :

Ընդդիմացիները շատ հարցերում
ամբաստանում էին Սազունուն եւ ըն-
կերներին :

Գուճարվեց Ա. . . ում կողմ. Պատգ.
ժողովը, որին որպէս կենտրոնի ան-
գամ եւ լիազոր՝ մասնակցեց նաեւ Սա-
զունին :

Հրապարակ եկաւ Հ. Մուշուրե-
անին, Չիթճեանին եւ ուրիշներին
խիստ կեղտով պատժելու հարցը :

Երկու երկար գիշերներ անընդհատ
վճուուց յետոյ, օպպոզիցիան պար-
տւեց միայն մի ձայնով :

Անցկացաւ մահաւան դատավճիռը :
Այդ վճիռի գործադրութեան արդիւք
հանդիսադաւ սակայն օպպոզիցիան ա-
ռարկելով որ առանց կենտրոնի պաշ-
տօնական վճիռի ու կնքուած հրամանին
որ եւ է տերթոր չէր կարող կատարել :
Եւ նրան պողոքեց խանգարել կարմիր
խրատմանքներ շարքը, խնդրել յե-
տաձգելով մտնել ապագային 1903 Մեկ-
տեմբերին կայանալիք Ընդհ. Պատգա-
մաւորական ժողովին :

Այս ողբում օրը թէ՛ յաջող օրը
հեռագիրը գուճեց Չիթճեանի սպանու-
թիւնը ամենավայրագ կերպով, Օղե-
ստյում . . .

Սա երկրորդ զոհն էր Հնչակեան
հաչակաւոր միութեան :

1903 թ. Սեպտեմբերի սկիզբներին
յաջորդաբար Լոնդոն հասան հետեւեալ
վայրերի պատգամաւորները 1) Ամերի-
կայի 18 մասնաճիւղերի կողմից՝ եւ Կա-
ճարեան եւ Միլիտան. 2) Բուլղարիա -
Ռուսաստանի 10 մասնաճիւղերի կողմից՝
Պ. Գալֆանտ 3) Ռուսաստանի մաս 20
մասնաճիւղերից 6ը միայն ուղարկել է-
ին իրանց պատգամաւորները, իսկ միւս-
ները իրանց ձայները փոխանցել էին
այլ եւ այլ պատգամաւորներ կամ Լոն-
դոնի կենտրոնական վարչութեան այս
կամ այն անդամին : Այդ վեց պատգա-
մաւորներն էին Թիֆլիսից՝ Վարդ-Ա-
ղստեան, Բաթումից՝ Որսորդ, Օղե-
ստյից՝ Ռ. Կարապետեան, Բազըից՝
Հրահատ, Բալխանից՝ Համր (Արամ
Գրիգորեան) իսկ Բիբի - Հէյրաթից՝
Ահրիման (Սարգիս Գալաբեան), Բացի
սրանցից Պատգամաւորական ժողովում
ձայն ունէին նաեւ Սազունի՝ Թիւրքա-
հայաստանի 3 մասնաճիւղերի կողմից Հ.-
Արզունեանեան եւ Տաշիքեան ներկայաց-
նում էին նոյնպէս զանազան մասնա-
ճիւղերի ձայներ : Վճակակա՞ ձայնով
մասնակցում էին նաեւ Լոնդոնի մասնա-
ճիւղի անդամներից՝ Վարազդաստն ու Ա.
Յովհաննիսեանը :

Ըստ մտաւոր ցենզի սոյն 14 պատ-
գամաւորները ներկայացնում էին հե-
տեւեալ խիստ հետաքրքիր պատկերը :
1 Համալսարանական :
2 Միջնակարգ կրթութիւն ստացած :
1 Թաւրիզի ուսումնարանն աւարտած :
1 Շամախու ծխ. դպրոցը աւարտած :
1 Պոլսոյ Ազգ. դպրոցը աւարտած :
3 Տարրական կրթութեան տէր :
4 Բանուոր՝ որ ազատ կարողում ու գրում
էին :

Գուցէ զարմանաք, եթէ ասեմ որ,
ամենից տեղոյն քաղաքական հասկացո-
ղութիւնների տէր անձը՝ հէնց ինքը
համալսարանական էր :

Ահա այդ տարրերից բաղկացած
Ընդհ. Պատգամաւորական ժողովն է որ
հաւաքուելով Լոնդոն, պիտի վճուէր շատ
ու շատ կենսական ու բարդ հարցեր . . .

Օգոստոս 15 ին (Ք. Ե.) Բեխնաւ րիւի
թիւ 85 տան մէջ (Հնչակեան կենտրո-
նատեղի) բացուեց Ընդհ. Պատգամ.
ժողովի Ա. նիստը՝ ներկայութեամբ 14
պատգամաւորների :

Հին Հնչակեանների երկու հո-
սանքներից, Սազունիականը՝ որ մե-
ծամասնութիւն էր կազմում սաստիկ
լարուած էր օպպոզիցիայի ղեկ, որ ներ-
կայացնում էին սկզբներում Հրահատն
ու Համրը, որոնց միացաւ նաեւ Որ-
սորդը միայն 3 - 4 ինստից յետոյ :

Պատգամաւորական ժողովի նիստե-
րը տեւեցին մինչեւ Համրի ու Որսոր-
դի սպանութեան օրը. նոյնքան էր,
իսկ 5 ին պատգամաւորներից մի երկու-
սը արդէն հրաժեշտ տւին Լոնտոնին :

Սա երկու քուկէս ամիս տեւող այդ
տաղակալի այդ կայանացնող ժողովնե-
րում գրած էին հետեւեալ էական ու-
կենսական խնդիրները. ա) Հին եւ վե-
րակազմակազմ Հնչակեանների պատակու-
մը. բ) Դրա հետեւանք Չիթճեան - Միւթ
սպանութիւնը. գ) Հ. Մուշուրեանի
մասին եղած ամբաստանութիւնները :
Այս բոլորի հետ կար նաեւ իր հերթին
Հրահատի հարցը : Վերջինս նախ քան
պատգամաւորական ժողովը բողոքած
լինելով կենտրոնական վարչութեան
պարբերի գործելակերպի դէմ, ամբաս-
տանած էր Սազունիականներից՝ որպէս
Հմայեակի. կամ այլ խօսքով՝ վերա-
կազմակերպի կուսակիցի :

Մեր նպատակից դուրս լինելով
ներկայ յղեւաններով խօսել մանրամաս-
նօրէն ժողովում չօջախուած բոլոր խըն-
դիրների մասին, կանց կանոնքը միայն
էական նշանակութիւն ունեցող ու մա-
նաւանդ մեր նիւթի՝ « Կարմիր խրատ-
մանք » ի հետ կապուած խնդիրների
վրայ :

Տեղն է, ունենում օրական երկու
ժողով. մէկը առաւօտեան ժամը 9 ից
մինչեւ 12ը, իսկ միւսը 4 - 7, Կիրակի
օրերը « հանգստանում էինք » :

Ժողովը վճուց նախ քանի օրա-
կարգի այն բոլոր հարցերը, որոնք ըն-
թացիկ ընտրի էին կրում եւ անմիջա-
կան լուծում պահանջում, եւ ապա մի-
այն անցնել վերոյիշեալ խնդիրներին :
Եւ այդ միայն նրա համար, որ ե-
թէ գալիսկազմակազմակերպ բարձ-
րանային ու պատակուտեմ առաջ գար,
Պատգամաւորական ժողովը գոնէ վճուած
լինէր ընթացիկ հարցերը :

Սեպտեմբեր 15 ից յետոյ մեծք
գանուում էինք գերազգուած վիճա-
կում : Իւրաքանչիւր օր սպասում էր
եւ՝ կոխ. եւ՝ ծծծ, եւ՝ . . . ամէն ինչ :

Մինչ այդ՝ օպպոզիցիային, որ
յարձակողական զիրքի մէջ էր, յաջող-
ւեց պարզելով Սազունու եւ նրա հետե-
ւորդների տաքախրատի սխալները՝
խախտել մի քանի Սազունիականների
գրութիւնը : Վարդ - Աղստեան որ Կով-
կասում, Ա. . . քաղաքի ժողովում
կանգնած էր Սազունու տեսակէտի վը-
րայ եւ հանդիսանում էր նրա աջ թի-
կունքը, Լոնդոնում իսկոյն զգաց իր
ծանր մոլորութիւնը եւ շտապեց սփափ-
ւել : Նա վճուապէս անցաւ օպպոզիցի-
այի կողմը : Ե. Կաճարեան, Վարազդաստ,
Յովհաննիսեան սկսեցին արդէն բացա-
յայտ կերպով արտայայտել իրանց ե-
րէկւայ սիրելի « կենտրոնի » ղեկ եւ
միւսնալով օպպոզիցիային պայքարել
նրա հետ :

Սեպտեմբերի վերջերին Սազունու
կողմին, որպէս հաւատարմի զինակից
ու պաշտպան, կանգնել էին Հ. Արզու-
մանեան, Ահրիման, Պ. Գալֆանտեան,
Միլիտան, Ռ. Կարապետեան, իսկ Ս.
Տաշիքեանը օրօրում էր, նայած թէ
քամին ո՞ր կողմից էր փչում :

Իրերի այս գրութեան մէջ էր. երբ
հրապարակ եկաւ, պատգամաւորների
պահանջով, Հրահատի խնդրից :

Ամբողջ Չ ժողովում, Սազունի եւ
Հրահատ, բացարձակ անխնայ ու կա-
տաղօրէն մտքասեւեւող յետոյ, վերջինը
կարողացաւ փաստելով ապացուցել, որ
կենտրոնը, որպէս ղեկավար մարմին,
կանգնած չէ եղել իր բարձրութեան
վրայ եւ շատ անգամ օգուելով իր կա-
ռավարչի զիրքից՝ հալածել ու ոտնակոխ
է արել իրան գուր չեկող ընկերներին :

Պատգամաւորական ժողովը միա-
ձայն զատապարտութեան կնիքը գրոշ-
մեց կենտրոնական վարչութեան ճակա-
տին արդար հոչակելով Հրահատին :

(Շարունակելի)

ՈւՍՈՒՑԻՉ

Պօլսոյ Կեդրոնական Ուսումնա-
կան Խորհրդէն վկայեալ ուսուցիչ մը
պատրաստ է ստանձնել հայերէնի,
թուաբանութեան, տոմարակալու-
թեան, բնագիտութեան եւ շ. գր-
սեր թէ՛ վարժարաններու եւ թէ՛
տուներու մէջ :

Պատրաստ է նաեւ վաճառատուն-
ներու մէջ հաշուակալութիւն եւ
թղթակցութիւններ կատարել :
Դիմել Խմբագրութեանս :

ԱՆՍՀԻՏ Ի ԴՈՒՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

« Անահիտ » ի Եղիպտոսի գոր-
ծակալ նշանակուած է Պ. Արմենակ
Ատիլեան՝ թէ 907 ի եւ թէ ներկայ
տարւոյ բաժնեկիցներու վճարման
համար պէտք է դիմել իրեն Տ.
Իորձակալութեան հասցէն է՝
Arménag Adiliah
c/o Davies Bryan & Co.
Sh. Moghraby Cairo

ՆՊՍՐԱՎԱՍՈՒ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԵՏ ԱԼԻ, ՊՍՊ-ԷԼ-ԽԱԼԻ

Շարէ Մուհամետ Ալիի ամբողջ գը-
ծին վրայ եղող նոյնպատճառներուն
մէջ, մեր վաճառատնի միակն է որ
սպարանքներու թարմութեան եւ մաք-
րութեան շնորհիւ մնալուն զիրք մը
բնած է տարիներէ ի վեր :

Նպարեղէններու վերաբերեալ ա-
մէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ
գնողներու համար, անթերի են սոյն
վաճառատնի մէջ :

Մեր յաճախորդները գոհ թողելու
նպատակաւ՝ սպասելի սպարանքներու
ընտրութեան եւ գնումին առան շատ
խնամք եւ նշոյն իսկ լծախնդրութիւն
կընենք : Ուրեմն նպարեղէնի վերա-
բերեալ ամէն սպարանք թարմ է եւ մա-
քուր մեր քով :

Կչիռը, որուն համար ուրիշ շատ
անկեր գանգատանաց պատճառ տուած է,
մեր քով գոհունակութիւն միայն առ-
թած է. վկայ մեր բազմաթիւ յաճա-
խորդները, որոնք միշտ գոհ մնացած
են :

Ձեր տունին նպարեղէնի բոլոր
պէտքերուն համար դիմեցէք ի Պայ-էլ-
խալը՝ մեր վաճառատնին եւ չ'պիտի
զղշաք : 16-41

ԿԱՐԱՊԵՏ ԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԳԻՍ Յ. ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեխանիկոս, լօծո-
կրափնարու եւ կապի վաճառատնու :

Տասներկու տարիներ « Արծիք »
Ընկերութեան քով մեքենայարդարու-
թեան զբաղելէ յետոյ, այժմ զինավա-
ճառ Չափարիս Դոնտասթիւուի քով
պաշտօնեայ է ղեկըքուելու եւ մեքենայար-
դարման ճիւղին մէջ :

Կարգ մը բարեկամ յաճախորդնե-
րու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս
ունեցած իր պարագայ ժամերը կիտի
տրամադրէ կարի մեքենաներու, ֆո-
նօկրաֆներու, կապի վաճառատններու,
նորոգութեանց եւ յարդարման :

Առ այժմ իրեն պէտք ունեցողնե-
րը փոխանակ հոս ու հոն թափառելու՝
կրնան դիմել իր տունը Պայր - Շէհրէի
կողմը Շափար Պէղղայա՝ կրնան հարցնել
նաեւ Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէն-
ներուն, եւ զարձակ զիրութեան համար
քարթ բոստալով մը կրնան դիմել « Ար-
չալոյսի » Տպարանին. նշանակելով ի-
րենց հասցէն, Փողոցին անունը եւ Տու-
նին թիւը :

Իր նորոգութեանց վտարքը պիտի
ստանայ իրեն յանձնուած աշխատու-
թիւնները լրանալէ եւ փորձեր կատար-
ուելէ յետոյ :

Կարի նոր մեքենաներ ալ կը վա-
ճառէ : 19 - 50